ԵՊՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «*ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/99*»

ք. Երևան «22» նոյեմբերի 2017թ.

«ԵՊՀ» Հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Ա. Սիմոնյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յուքոմ>> ՍՊԸ-ն, ի դեմս կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտերնետ կապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 8544000 (ութ միլիոն հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության

օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **11** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ԵՊՀ Հիմնադրամ	«Յուքոմ» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	ք. Երևան, Տերյան 19, բն.4
«Արդշինբանկ» ՓԲԸ	ՀՎՀՀ 00024873
ՀՎՀՀ 01506928	«Ամերիա բանկ» ՓԲԸ
Հ/Հ 247010000906	Հ/Հ 1570005313330100
ռեկտոր՝ Ա.Սիմոնյան	կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյան
---	---
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 22» նոյեմբերի 2017 թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/99» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
1	48220000-1	1. Ինտերնետային կապի ծառայության տրամադրում օպտիկամանրաթելային կապուղու միջոցով 1.1 ԵՊՀ սերվերային հանգույցին (Ալեք Մանուկյան 1 համալիրի կենտրոնական մասնաշենք) ինտերնետային կապի տրամադրում՝ • Թողունակությունը ՀՀ տարածքից դուրս ցանցերի հետ – 100 մբիթ/վրկ երաշխավորված սիմետրիկ, • Թողունակությունը առնվազն 300 մբիթ/վրկ սիմետրիկ արագությամբ «Արմիքս» Հիմնադրամի (ArmIX) հայկական տրաֆիկի փոխանակման կենտրոնի հանգույցի հետ, • Թողունակությունը պրովայդերի ցանցում՝ առնվազն 1 գբիթ/վրկ: • 256 հատ իրական IP հասցեի տրամադրում: 1.2. ԵՊՀ SS կրթական և	հատ	7500000	1	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	2018թ.-ի I-IV եռամսյակներ

		հետազոտական կենտրոնի համար (Ալեք Մանուկյան 1 համալիրի N4 մասնաշենք) ինտերնետային կապի տրամադրում՝ • թողունակություն ը ՀՀ տարածքից դուրս ցանցերի հետ – 10մբիթ/վրկ երաշխավորված սիմետրիկ, • առանձնացված կապուղիով, իրական IP հասցեների տրամադրմամբ • Թողունակություն ը առնվազն 300 մբիթ/վրկ սիմետրիկ արագությամբ «Արմիքս» Հիմնադրամի (ArmIX) հայկական տրաֆիկի փոխանակման կենտրոնի հանգույցի հետ, • Թողունակություն ը պրովայդերի ցանցում՝ առնվազն 1 գբիթ/վրկ: 1.3. ԵՊՀ Համակարգային ծրագրավորման լաբորատորիայի համար (Ալեք Մանուկյան 1 համալիրի N4 մասնաշենք) ինտերնետային կապի տրամադրում՝ • թողունակություն ը ՀՀ տարածքից դուրս 36 մբիթ/վրկ, սիմետրիկ, • առանձնացված կապուղիով, 1 հատ իրական IP հասցե, • Թողունակություն ը առնվազն 300 մբիթ/վրկ սիմետրիկ արագությամբ «Արմիքս» Հիմնադրամի (ArmIX) հայկական					

		տրաֆիկի փոխանակման կենտրոնի հանգույցի հետ, • Թողունակությունը պրովայդերի ցանցում՝ առնվազն 1 գբիթ/վրկ: 2. Տվյալների փոխանցում ԵՊՀ-ի տարբեր մասնաշենքերի միջև, մասնավորապես. • ԵՊՀ գլխավոր մասնաշենք (ք. Երևան, Ալեք Մանուկյան 1), թողունակությունը՝ 100 Մբիթ/վրկ • ԵՊՀ N6 ուսումնական մասնաշենք (ք. Երևան, Աբովյան 52ա) թողունակությունը՝ 100Մբիթ/վրկ ԵՊՀ Ծարավ Աղբյուր փ. գտնվող Ուսումնական մասնաշենք (ք. Երևան, Ծարավ Աղբյուր 55ա) թողունակությունը՝ 100Մբիթ/վրկ:					
2	48220000-2	Շարժական ինտերնետ կապի տրամադրում ՀՀ տարածքում: Ինտերնետ կապի արագությունը գերարագ՝ առնվազն 3G, որը պետք է ապահովվի սահմանված ծավալի համար (գերարագ ինտերնետի ծավալ), որի օրացուցային ամսվա ընթացքում սպառվելուց հետո անսահմանափակ ինտերնետի կապ՝ մինչև 1024 Կբ/վ ներբեռնման (download) և մինչև 256 Կբ/վ վերբեռնման (upload) արագությամբ: Ծառայություն մատուցողը պետք է ապահովվի 24 ժամյա սպասարկում, հաշիվների առցանց (էլ. փոստով) առաքում: Չորս (3) օգտատիրոջ համար շարժական կապ: Գերարագ ինտերնետի ծավալը՝ առնվազն 20 Gb: Ինտերնետ կապի միացման համար ծառայությունը մատուցողի	հատ	180000	3	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	2018թ. հունվար

		կողմից տրամադրվում է USB երթուղիչ (մոդեմ) տվյալների փոխանցման 21.6 Մբիթ/վրկ արագագործությամբ, տվյալների փոխանցման աշխատանքի համատեղելիություն HSPA+, GSM/GPRS/EDGE ցանցերում:					
3	48220000-3	Շարժական ինտերնետ կապի տրամադրում ՀՀ տարածքում: Ինտերնետ կապի արագությունը գերարագ՝ առնվազն 3G, որը պետք է ապահովվի սահմանված ծավալի համար (գերարագ ինտերնետի ծավալ), որի օրացուցային ամսվա ընթացքում սպառվելուց հետո անսահմանափակ ինտերնետի կապ՝ մինչև 1024 Կբ/վ ներբեռնման (download) և մինչև 256 Կբ/վ վերբեռնման (upload) արագությամբ: Ծառայություն մատուցողը պետք է ապահովվի 24 ժամյա սպասարկում, հաշիվների առցանց (էլ. փոստով) առաքում: Չորս (5) օգտատիրոջ համար շարժական կապ: Գերարագ ինտերնետի ծավալը՝ առնվազն 50 Գb: Ինտերնետ կապի միացման համար ծառայությունը մատուցողի կողմից տրամադրվում է USB երթուղիչ (մոդեմ) տվյալների փոխանցման 21.6 Մբիթ/վրկ արագագործությամբ,, տվյալների փոխանցման աշխատանքի համատեղելիություն HSPA+, GSM/GPRS/EDGE ցանցերում: Միաժամանակ ծառայություն մատուցողի կողմից տրամադրվում է երկրորդ SIM-քարտը, որի միջոցով միևնույն գերարագ ինտերնետի ծավալների սահմաններում հնարավոր է երկրորդ սարքին (պլանշետ, USB երթուղիչ և այլն) նույնպես ապահովել շարժական ինտերնետային կապով:	հատ	480000	5	ք. Երևան, Ալեք Մանուկյան 1	2018թ. հունվար
4	48220000-	Շարժական ինտերնետ կապի տրամադրում ՀՀ տարածքում:	հատ	38400	4	ք.	2018թ.

	4	Ինտերնետ կապի արագությունը գերարագ՝ առնվազն 3G, որը պետք է ապահովվի սահմանված ծավալի համար (գերարագ ինտերնետի ծավալ), որի օրացուցային ամսվա ընթացքում սպառվելուց հետո անսահմանափակ ինտերնետի կապ՝ մինչև 1024 Կբ/վ ներբեռնման (download) և մինչև 256 Կբ/վ վերբեռնման (upload) արագությամբ: Ծառայություն մատուցողը պետք է ապահովվի 24 ժամյա սպասարկում, հաշիվների առցանց (էլ. փոստով) առաքում: Չորս (4) օգտատիրոջ համար շարժական կապ: Գերարագ ինտերնետի ծավալը՝ առնվազն 50 Gb: Ինտերնետ կապի միացման համար ծառայությունը մատուցողի կողմից տրամադրվում է USB WiFI երթուղիչ (մոդեմ) տվյալների փոխանցման 42.2 Մբիթ/վրկ արագագործությամբ, տվյալների փոխանցման աշխատանքի համատեղելիություն HSPA+, GSM/GPRS/EDGE ցանցերում: Երթուղիչը պետք է հնարավորություն ընձեռի USB կապով միացնել 1 սարք, իսկ WiFi կապով՝ միաժամանակ առնվազն 8 սարք:		0		Երևան, Ալեք Մանուկյան 1	հունվար

Պ ա տ վ ի ր ա տ ու

ԵՊՀ Հիմնադրամ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

«Արդշինբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 01506928

Հ/Հ 247010000906

ռեկտոր՝ Ա.Սիմոնյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

«Յուքոմ» ՍՊԸ

ք. Երևան, Տերյան 19, բն.4

ՀՎՀՀ 00024873

«Ամերիա բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570005313330100

կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
« 22» նոյեմբերի 2017թ. կնքված
«ԵՊՀ-ԳՀԾՁԲ-17/99» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընամ նը
1	48220000-1	Ինտերնետա-յին կապի և ներքին ծառայողական տվյալների փոխանցման ծառայության տրամադրում օպտիկամանրաթելային կապուղու միջոցով	625000	625000	625000	625000	625000	625000	625000	625000	625000	625000	625000	625000	75 00 00
2	48220000-2	Շարժական ինտերնետա-յին կապի տրամադրում 1	180000	180000											
3	48220000-3	Շարժական ինտերնետա-յին կապի տրամադրում 2	480000	480000											

	48220000-4	Շարժական ինտերնետ-ային կապի տրամադրում 3	384000	384000

Պ ա տ վ ի ր ա տ ու

ԵՊՀ Հիմնադրամ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 1

«Արդշինբանկ» ՓԲԸ

ՀՎՀՀ 01506928

Հ/Հ 247010000906

ռեկտոր՝ Ա.Սիմոնյան

(ստորագրություն)

Կ.Տ

Կ ա տ ա ր ո ղ

«Յուքոմ» ՍՊԸ

ք. Երևան, Տերյան 19, բն.4

ՀՎՀՀ 00024873

«Ամերիա բանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570005313330100

կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյան

(ստորագրություն)

Կ.Տ